

Միգրացիայի վերաբերյալ հիմնական տեղեկատվական աղբյուրը տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունն (ՏՏԿԱՀ) է, ինչը հնարավորություն է ընձեռում տեղեկություններ ստանալ միգրացիոն գործընթացներում ներգրավված 15 և բարձր տարիքի տնային տնտեսության անդամների գտնվելու վայրի և մեկնելու պատճառների վերաբերյալ (վերջին հետազոտության արդյունքները հրատարակված է նաև՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ըստ 2015թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, ՀՀ ԱՎԾ, Համաշխարհային Բանկ, 2016թ., գլուխ 1 «Ժողովրդագրություն և միգրացիա», էջ 19-27, http://www.armstat.am/file/article/poverty_2016a_1.pdf :

2002-2007թթ. Ժամանակաշրջանում միգրացիոն գործընթացներում արձանագրված փոփոխությունները, միգրացիոն առանձին համակցությունների քանակական և որակական հիմնական ցուցանիշները ներկայացված են «ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույցում» (Երևան-2008, ՀՀ ԱՎԾ, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, http://www.armstat.am/file/article/rep_migr_08a.pdf):

2007-2013թթ. Ժամանակաշրջանում միգրացիոն գործընթացներում արձանագրված փոփոխությունները, միգրացիոն առանձին համակարգերի հիմնական ցուցանիշները ներկայացված են «Հայաստանում միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտության մասին զեկույցում» (Երևան 2014, Միգրացիայի Միջազգային Կազմակերպություն, ՀՀ ԱՎԾ, ԵՄ, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, Հայրուսական /սլավոնական/ համալսարան):

Վերոհիշյալ հետազոտություններն ամբողջապես խարսխված են միջազգային միգրացիայի վերաբերյալ ՄԱԿ-ի սահմանումների և մեթոդաբանության վրա:

Հայաստանում միգրացիայի վարչական տեղեկատվական ամբողջացված աղբյուրներ դեռևս ձևավորված չեն: Ամբողջացման փուլում է գտնվում ՀՀ բնակչության պետական ռեգիստրը:

ՀՀ-ում առկա է նաև ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգը, ինչը հնարավորություն է տալիս տեղեկություններ ստանալ սահմանահատումների և դրանց մասնակիցների թվաքանակի վարչական գրանցումների վերաբերյալ, սակայն համակարգը հնարավորություն չի ընձեռում այդ տեղեկությունները մշակել՝ ՄԱԿ-ի սահմանումներին համապատասխան, միգրանտների վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար (տես էջ 109):

The main source of information on migration is the Integrated Living Conditions Survey which enables to derive information on destination country and reasons for departing of the household members at the age 15 and over who are involved in migration (the results of last survey is published in “Social Snapshot And Poverty In Armenia” based on the results of the 2015 Integrated Living Conditions Survey, NSS RA, World Bank, Yerevan - 2016, Chapter 1 “Demographics and Migration” p.18-27, http://www.armstat.am/file/article/poverty_2016a_1.pdf .

Changes recorded in the migration processes during the 2002-2007, the main quantitative and qualitative indicators on separate migration universes are presented in the “Report on Sample Survey of External and Internal Migration in RA” (Yerevan-2008, NSS RA, UNFPA. http://www.armstat.am/file/article/rep_migr_08e.pdf)

Changes recorded in the migration processes for 2007-2013, on the main indicators of different migration groups are presented in the «Report on Household Survey on Migration in Armenia» (Yerevan-2014, IOM, NSS RA, EU, UNECE, Russian-Armenian (Slavonic) University).

The above mentioned surveys are entirely based on UN definitions and methodology of international migration.

Integrated Administrative Information sources of RA migration are not formed yet. The State Population Register is at the stage of completion. RA Boarder Management Information System is also available in the Republic of Armenia, which enables to obtain information about the administrative records on border crossings and the number of participants, but this system does not allow to carry out the data processing in order to get migration data according to UN definitions and methodology (see page 109).

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 2012-2015ԹԹ.

MIGRATION PROCESSES IN 2012-2015

Ըստ 2015թ. ՏՏԿԱՀ արդյունքների, տնային տնտեսությունների (տ/տ) 5.3%-ը 2012-2015թթ. ներգրավված են եղել արտաքին և ներքին միգրացիոն գործընթացներում, որոնք կազմել են տ/տ 15 և բարձր տարիքի անդամների 9.5%: 2012-2015թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված 15 և բարձր տարիքի տ/տ անդամների 55.6%-ը (շուրջ 130 հազ. մարդ) 2015թ. դրությամբ դեռևս բացակայել և գտնվել են՝ ՀՀ այլ մարզերում, ք.Երևանում, տվյալ մարզի այլ բնակավայրում կամ այլ երկրում, 41.0%-ը (96 հազ. մարդ) վերադարձել են մեկնումներից, իսկ 3.4%-ն առաջին անգամ է ժամանել տվյալ բնակավայր (7.7 հազ. մարդ) (Աղյուսակ 7.1):

According to ILCS 2015 findings, some 5.3% of households (h/h) were involved in external and internal migration processes over the period of 2012-2015; these comprised 10.3% of household members of the age 15 years and above. Among household members of the age 15 years and above, who were involved in migration processes over the period of 2012-2015, some 55.6% (around 130 thousand persons) were still absent from the household as of 2015 and resided either in other regions of the country, in Yerevan, in other communities within their region, or in other countries, whereas 41.0% (96 thousand person) had returned home, and 0.6% (7.7 thousand person) had arrived in that locality for the first time (Table 7.1).

Նշված ժամանակահատվածում արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերում ընդգրկված տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների՝ 11.0%-ի տեղաշարժերը 2015թ. դրությամբ եղել են ներհանրապետական՝ Երևան քաղաքում/ՀՀ մարզերում, 10.5%-ը՝ ԼՂՀ-ում, իսկ մնացած 78.5%-ը՝ միջպետական, որի գերակշիռ մեծամասնությունը՝ 89.3%-ը, Ռուսաստանի Դաշնությունում (աղյուսակ 7.2):

Among households with members of the age 15 years and above, who were involved in migration processes over that period, in 2015 some 11.0% were in internal migration (Yerevan/other regions), 10.5% in NKR and 78.5% migrated to other countries, with the overwhelming majority of 89.3% migrated to the Russian Federation (Table 7.2).

Միգրացիոն գործընթացներում ներգրավված և մեկնումներից **վերադարձած** տ/տ անդամներից՝ 74.8%-ի բացակայության տևողությունը կազմել է մինչև մեկ տարի (այդ թվում՝ 19.8%-ի բացակայությունը կազմել է երեք ամիս և պակաս), իսկ 25.2%-ինը՝ մեկ տարի և ավելի (աղյուսակ 7.3): Ընդ որում, մեկնումներից վերադարձածների 72.6% Ռուսաստանի Դաշնությունից են եղել:

Among household members involved in migration processes who **returned** from migration, some 74.8% were absent for less than 1 year (of which 19.8% for less than 3 months), and 25.2% – for one year and more. At that 72.6% returned from the Russian Federation (Table 7.3).

2012-2015թթ.-ին իրենց մշտական բնակավայրից բացակայած՝ մեկնած և 2015թ.-ի դրությամբ դեռևս **չվերադարձած**, 15 և բարձր տարիքի տ/տ անդամների 9.7%-ի բացակայության տևողությունը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կազմել է 3 ամիս և պակաս, 53.1%-ինը՝ 4-12 ամիս, իսկ 37.2%-ինը՝ մեկ տարի և ավելի (աղյուսակ 7.4):

Among household members of age 15 and above, who left the place of their permanent residence during 2012-2015 and did not return as of 2015, 9.7% were absent for 3 months or less, 53.1% for 4-12 months, and 37.2% – for one year and more (Table 7.4).

2012-2015թթ. 3 ամիս և ավելի ժամկետով իրենց մշտական բնակավայրից բացակայած՝ մեկնած և 2015թ.-ի դրությամբ, դեռևս չվերադարձած 15 և բարձր տարիքի տ/տ անդամների 11.9 %-ը գտնվել է ՀՀ տարածքում՝ ք.Երևանում, ՀՀ մարզերում, 13.0%-ը՝ ԼՂՀ-ում, իսկ 75.1%-ը գտնվել է այլ երկրներում, այդ թվում՝ գերակշիռ մեծամասնությունը եղել է Ռուսաստանի Դաշնությունում (աղյուսակ 7.5):

Among household members of age 15 and above, who left the place of their permanent residence during 2012-2015 for 3 months and more and had not returned as of 2015, some 11.9% resided within the country – (in Yerevan and regions), 13.0% in NKR, and 75.1% in other countries, predominantly in the Russian Federation (Table 7.5).

2012-2015թթ. 3 ամիս և ավելի տևողությամբ արտաքին միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2015թ. դրությամբ դեռևս արտերկրից

Household members of age 15 and above, who were involved in external migration processes over the period of 2012-2015 for 3 months and more and had not returned as of 2015, around 56.4% were absent from the country for 4-12 months, and 43.6% – for one year and more.

չվերադարձած տ/տ անդամների շուրջ 56.4%-ի ՀՀ-ից բացակայելու տևողությունը կազմել է 4-12 ամիս, իսկ 43.6 %-ինը՝ մեկ տարի և ավելի:

Ըստ ՄԱԿ-ի մեթոդաբանության, ուսումնասիրվող ժամանակահատվածում (2012-2015թթ.) արտաքին միգրանտները կազմել են հաշվառման ժամանակ երկրից 3 ամիս և ավելի ժամկետով բացակայած տ/տ անդամների (չվերադարձածների)՝ 74.4%-ը (մոտ 87.5 հազ. մարդ), որոնցից կարճաժամկետ միգրանտները՝ 4-12 ամիս տևողությամբ երկրից բացակայածները (որում չեն ներառվել՝ հանգստի, ընկերներին/բարեկամներին այցելության, արձակուրդի, գործնական, առողջական կամ կրոնական ուխտագնացության մեկնածները) կազմել են արտաքին միգրանտների համակցության 51%-ը, իսկ երկարաժամկետ միգրանտները՝ մեկ տարի և ավելի ժամկետով բացակայածները՝ 49%-ը:

Հետազոտության արդյունքներով արձանագրվել է, որ 2012-2015թթ. միջակայքում 3 ամիս և ավելի տևողությամբ ՀՀ-ից մեկնած և 2015թ.-ի դրությամբ դեռևս չվերադարձած (ներառյալ կարճաժամկետ միգրանտները) 15 և բարձր տարիքի տ/տ միգրանտ անդամների գնահատված միջին տարեկան թվաքանակը կազմել է շուրջ 22 հազ. մարդ:

According to the UN methodology, within the reporting period (2012-2015), external migrants constituted 74.4% (around 87.5 thousand person) of those household members who, by the record date, were absent from (had not returned to) the country for a period of three months and more. Among them, short-term migrants with a duration of absence for 4-12 months (except for those having left for recreation, visits to friends/relatives, holidays, business tips, medical treatment or religious pilgrimage) comprised 51%, and long-term migrants with a duration of absence for one year and more comprised 49%.

According to survey findings, the average annual estimated number of household members of the age 15 years and above, who were involved in migration processes over the period of 2012-2015 for 3 months and more and had not returned as of 2015, totaled around 22 thousand.

Աղյուսակ 7.1. 2012-2015թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված տնային տնտեսությունների՝ 15 և բարձր տարիքի անդամներն ըստ ք.Երևանի/ՀՀ մարզերի և միգրացիոն գործընթացներում ներգրավվածության

Table 7.1. Household Members of Age 15 and Above Involved in Migration processes over 2012-2015, by Yerevan/Regions and by Involvement Status

(%)						
	ներգրավված են եղել միգրացիոն գործընթացներում / Involvement in migration processes			Ընդամենը Total		
	մեկնել են և չեն վերադարձել / have migrated and have not returned	մեկնել են և վերադարձել / have migrated and returned	առաջին անգամ են ժամանել / Arrived at the location for the first time			
ք. Երևան	16.1	28.3	62.9	21.3	c. Yerevan	
Արագածոտն	7.2	0.5	0.0	4.4	Aragatsotn	
Արարատ	7.2	10.0	12.1	8.4	Ararat	
Արմավիր	7.7	1.0	0.0	4.8	Armavir	
Գեղարքունիք	8.8	14.7	0.0	11.3	Gegharkunik	
Լոռի	16.2	12.0	7.8	14.4	Lori	
Կոտայք	9.0	13.4	12.9	10.9	Kotaik	
Շիրակ	18.5	10.3	0.0	15.0	Shirak	
Սյունիք	2.4	0.3	0.0	1.5	Syunik	
Վայոց ձոր	2.7	2.5	0.7	2.6	Vayots Dsor	
Տավուշ	4.2	7.0	3.6	5.4	Tavush	
ՀՀ - ընդամենը	100	100	100	100	Total	

Աղյուսակ 7.2 2012-2015թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված տնային տնտեսությունների՝ 15 և բարձր տարիքի անդամներն ըստ մեկնելու/վերադառնալու պատճառների և գտնվելու/ վերադառնալու վայրի, 2015թ.

Table 7.2 Household Members of Age 15 and Above Involved in Migration Processes over 2012-2015, by Reasons for Migrating/Returning, and by Destination/Departure Point, 2015

(%)

Գտնվելու /վերադառնալու հիմնական պատճառը Main reason for migrating/ returning	Գտնվելու/վերադառնալու վայրը/ Destination/departure point						
	ք. Երեվան Yerevan	ՀՀ մարզեր RA Regions	ԼՂՀ NKR	ՌԴ RF	ԱՊՀ այլ երկիր Other CIS country	Այլ Other	Ընդամենը Total
1. Աշխատելը /աշխատանք փնտրելը Need to/ search for work	1.7	1.2	1.0	91.5	2.1	2.5	100
2. Ընտանեկան/ Family circumstances	3.4	10.5	1.5	74.6	1.0	9.0	100
3. Բնակությունը /Residence	16.1	12.3	0.0	49.7	2.8	19.1	100
4. Մասնավոր այց բարեկամներին, ընկերներին / Visit friends/ relatives	2.5	0.7	1.1	68.4	7.9	19.4	100
5. Զբոսաշրջություն/Tourism	43.5	0.0	7.7	27.8	2.1	18.9	100
6. Ուսում/վերապատրաստում Study and training	45.2	30.7	2.9	12.4	0.0	8.8	100
7. Աշխատանքի ավարտ Finished working	0.0	0.0	0.0	97.7	1.1	1.2	100
8. Բուժում/առողջական Medical treatment/health	0.0	6.1	0.0	74.5	14.1	5.3	100
9. Այլ/ Other	2.4	26.1	54.0	5.0	0.0	12.5	100
Ընդամենը / Total	3.7	7.3	10.5	70.1	2.0	6.4	100

Աղյուսակ 7.3 2012-2015թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2015թ. դրությամբ վերադարձած տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների բաշխումն՝ ըստ վերադառնալու պատճառի և բացակայության տևողության

Table 7.3 Household Members of Age 15 and Above Involved in Migration Processes over 2012-2015 and Having Returned as of 2015, by Reason for Returning and by Duration of Absence

(%)

Վերադառնալու հիմնական պատճառը/ Main reason for returning	Բացակայության տևողությունը/ Duration of absence			Ընդամենը/ Total
	≤3 ամիս/ months	4 -11 ամիս/ months	≥ 12 ամիս / months	
1.Աշխատելը/ աշխատանք փնտրելը Need to/ search for work	19.7	27.7	12.6	22.3
2. Ընտանեկան / Family circumstances	12.8	8.5	11.7	10.2
3. Բնակությունը / Residence	0.0	1.6	6.3	2.4
4. Մասնավոր այց բարեկամներին, ընկերներին / Visit friends/ relatives	33.8	8.4	8.1	13.3
5. Զբոսաշրջություն / Tourism	5.1	0.3	4.8	2.4
6. Ուսում/վերապատրաստում / Study and training	8.1	0.7	1.2	2.3
7. Աշխատանքի ավարտ/ Finished working	10.5	46.9	12.1	30.9
8. Բուժում/առողջական Medical treatment/health	8.1	3.0	1.6	3.7
9. Այլ/ Other	1.9	2.9	41.6	12.5
Ընդամենը/ Total	100	100	100	100

Աղյուսակ 7.4 2012-2015թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2015թ. դրությամբ դեռևս չվերադաձած տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամներն՝ ըստ բացակայության տևողության

Table 7.4 Household Members of Age 15 and Above Involved in Migration Processes over 2012-2015, and Having Not Returned as of 2015, by Duration of Absence

(%)

Մեկնելու հիմնական պատճառը/ Main reason for migrating	Բացակայության տևողությունը/ Duration of absence			Ընդամենը/ Total
	≤3ամիս/ months	4 -11ամիս/ months	≥ 12 ամիս / months	
1. Աշխատելը/ Need to work	71.5	74.5	59.4	68.2
2. Աշխատանք փնտրելը/ Search for work	6.6	3.5	0.9	2.8
3. Ընտանեկան / Family circumstances	3.0	2.4	5.0	3.5
4. Բնակությունը /Residence	0.8	0.2	5.1	2.2
5. Մասնավոր այց բարեկամներին, ընկերներին / Visit friends/ relatives	1.2	0.4	0.4	0.5
6. Ուսում/վերապատրաստում /Study and training	10.0	2.9	0.9	2.8
7. Գործնական / Business	0.0	0.3	0.0	0.1
8. Բուժում/առողջական Medical treatment/health	0.0	0.3	0.9	0.5
9. Այլ/ Other	6.9	15.5	27.4	19.4
Ընդամենը	100	100	100	100

Աղյուսակ 7.5 2012-2015թթ. 3 ամիս և ավելի տևողությամբ միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2015թ. դրությամբ դեռևս չվերադաձած տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամներն ըստ մեկնելու պատճառի և գտնվելու վայրի

Table 7.5 Household Members of Age 15 and Above Involved in Migration Processes over 2012-2015 for Three Months and More and Having not Returned as of 2015, by Reasons for Migrating and by Destination Point

(%)

Մեկնելու հիմնական պատճառը/ Main reason for migrating	Գտնվելու վայրը/ Destination point								Ընդամենը/ Total
	ք. Երեվան Yerevan	ՀՀ մարզեր RA Regions	ԼՂՀ NKR	ՌԴ Russian Federation	ԱՊՀ այլ երկիր Other CIS country	Եվրոպական երկիր European country	ԱՄՆ և Կանադա USA and Canada	Այլ Other	
1. Աշխատելը/ Need to work	1.8	1.2	1.1	93.4	0.8	1.2	0.5	0.0	100
2. Աշխատանք փնտրելը/ Search for work	0.0	0.0	0.0	93.8	0.0	0.0	0.0	6.2	100
3. Ընտանեկան / Family circumstances	0.0	7.6	0.0	87.6	0.0	4.8	0.0	0.0	100
4. Բնակությունը / Residence	13.3	0.0	0.0	73.7	0.0	13.0	0.0	0.0	100
5. Ուսում/վերապատրաստում/ Study and training	59.9	6.1	0.0	13.5	0.0	0.0	13.7	6.8	100
6. Բուժում/առողջական Medical treatment/ health	0.0	0.0	0.0	65.7	0.0	34.3	0.0	0.0	100
7. Այլ/ Other	3.2	32.7	62.3	1.8	0.0	0.0	0.0	0.0	100
Ընդամենը/ Total	3.5	8.1	13.8	71.6	0.5	1.8	0.4	0.3	100

Աղյուսակ 7.6 ՀՀ ժամանումներն ու մեկնումները 2010-2015թթ.¹

Table 7.6 RA Arrivals and Departures in 2010-2015¹

	2010	2011	2012	2013	2014	2015	/person/
ՀՀ ընդամենը							RA Total
Ժամանել են	32 500	30 900	29 300	19 800	17 400	19 500	Arrived
Մեկնել են	69 800	59 400	38 700	44 200	39 200	45 400	Departed
Միգրացիայի մնացորդը	-37 300	-28 500	-9 400	-24 400	-21 800	-25 900	Net migration
Որից՝ միջազգային միգրացիա	Of which – International migration						
Ժամանել են	18 300	17 800	19 500	12 300	10 700	10 600	Arrived
Մեկնել են	55 600	46 300	28 900	36 700	32 500	36 500	Departed

<p>Մշտական բնակության երկրի, երկարաժամկետ միջազգային միգրանտի և կարճաժամկետ միջազգային միգրանտի սահմանումները*</p> <p>Մշտական բնակության երկիր - երկիրը, որում անձն ապրում է, այսինքն, որում նա ունի ապրելու տեղ և որտեղ նա սովորաբար ծախսում է օրվա հանգստի ժամերը: Ժամանակավոր արտասահման ճամփորդությունները հանգստի, արձակուրդի, ընկերներին և մտերիմներին այցելությունների նպատակով, գործուղման, բուժման կամ կրոնական ուխտագնացության, չեն փոխում անձի մշտական բնակության երկիրը:</p> <p>Երկարաժամկետ միգրանտ - անձը, ով իր մշտական (սովորաբար) բնակության երկրից տեղաշարժվում է մեկ այլ երկիր՝ առնվազն մեկ տարի (12 ամիս) ժամկետով, այսինքն, նշանակետ երկիրը նրա համար դառնում է նոր մշտական բնակության երկիր: Մեկնման երկրի տեսանկյունից՝ մեկնող անձը համարվում է երկարաժամկետ արտագաղթող (եմիգրանտ), իսկ ժամանման երկրի համար՝ տվյալ անձը համարվում է երկարաժամկետ ներգաղթող (իմիգրանտ):</p> <p>Կարճաժամկետ միգրանտ - անձը, ով իր մշտական (սովորաբար) բնակության երկրից տեղաշարժվում է մեկ այլ երկիր՝ առնվազն 3 ամիս, բայց մեկ տարուց (12 ամիս) պակաս ժամկետով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տեղաշարժը պայմանավորված է հանգստի, արձակուրդի, ընկերներին և մտերիմներին այցելությունների, գործուղման, բուժման կամ կրոնական ուխտագնացության նպատակով: Միջազգային միգրացիայի վիճակագրության նպատակով, կարճաժամկետ միգրանտների մշտական բնակության երկիրը՝ այնտեղ գտնվելու ժամանակաընթացքում, կհամարվի նշանակման երկիրը:</p> <p>*«Рекомендации по Статистике Международной Миграции», 1-ое пересмотренное издание, ООН, Нью-Йорк, 1998, стр.15 http://www.armstat.am/file/doc/99475943.pdf</p>	<p>Definition of country of usual residence, of long-term international migrant and of short-term international migrant*</p> <p>Country of usual residence - The country in which a person lives, that is to say, the country in which he or she has a place to live where he or she normally spends the daily period of rest. Temporary travel abroad for purposes of recreation, holiday, visits to friends and relatives, business, medical treatment or religious pilgrimage does not change a person's country of usual residence.</p> <p>Long-term migrant - A person who moves to a country other than that of his or her usual residence for a period of at least a year (12 months), so that the country of destination effectively becomes his or her new country of usual residence. From the perspective of the country of departure the person will be a long term emigrant and from that of the country of arrival the person will be a long-term immigrant.</p> <p>Short-term migrant - A person who moves to a country other than that of his or her usual residence for a period of at least 3 months but less than a year (12 months) except in cases where the movement to that country is for purposes of recreation, holiday, visits to friends and relatives, business, medical treatment or religious pilgrimage. For purposes of international migration statistics, the country of usual residence of short-term migrants is considered to be the country of destination during the period they spend in it.</p> <p>* «Recommendations on Statistics of International Migration», Revision 1, UN, New York, 1998, p. 10 http://www.armstat.am/file/doc/99475948.pdf</p>
--	--

¹ 2010-2011թթ. վերահաշվարկված են ՀՀ 2011թ. մարդահամարի, 2012թ.-ից՝ գնահատված են ՏՏԿԱՀ-ի արդյունքների հիման վրա: 2010-2011 are recalculated based on RA 2011 Population Censusa results, since 2012 – estimated by the results of ILCS.

Աղյուսակ 7.7 ՀՀ կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների բաշխումն ըստ քաղաքացիության երկրի և կացության կարգավիճակի տեսակի, 2015թ.
 Table 7.7 Distribution of Foreigners Gained RA Residency Status by Country of Citizenship and Type of Residency, 2015թ.

Քաղաքացիության երկիրը	Ընդամենը Total	Այդ թվում՝ ըստ կացության կարգավիճակների Of which by type of residency status			Մայր/person Country of citizenship
		Ժամանակավոր Temporary	Մշտական Permanent	Հատուկ Special	
Ընդամենը	5722	3847	1185	690	Total
Իրանի Իսլամական Հանրապետություն	1 059	801	105	153	Islamic Republic of Iran
Հնդկաստան	1 119	1 108	11	0	India
Ռուսաստանի Դաշնություն	782	264	492	26	Russian Federation
Սիրիա	512	118	113	281	Syria
Վրաստան	201	88	105	8	Georgia
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	257	145	46	66	United States of America
Ուկրաինա	309	194	111	4	Ukraine
Իսրայել	141	136	5	0	Israel
Լիբանան	96	47	38	11	Lebanon
Ֆրանսիա	69	49	10	10	France
Իսպանիա	55	54	1	0	Spain
Իտալիա	56	50	6	0	Italy
Թուրքմենստան	78	39	19	20	Turkmenistan
Գերմանիա	80	45	19	16	Germany
Այլ երկրներ	903	706	104	93	Other countries
Քաղաքացիություն չունեցող	5	3	0	2	Stateless
<i>Ընդամենը կացության կարգավիճակ ստացածներին</i>					<i>Of total gained residency status:</i>
ԱՊՀ երկրներ	1 427	636	747	44	CIS countries
ԵՄ երկրներ	447	332	63	52	EU countries
ԱՅԼ	3 848	2879	375	594	Other

Աղյուսակ 7.8 Ապաստան հայցող անձանց բաշխումն ըստ սեռի, տարիքային խմբերի և քաղաքացիության, 2015թ.

Table 7.8 Asylum Seekers Disaggregated by Sex, Age Group and Country of Citizenship, 2015

Քաղաքացիության երկիրը Country of Citizenship	Ընդամենը ապաստան հայցող անձինք Total asylum seekers	այդ թվում՝ ըստ տարիքային խմբերի և սեռի / of which by age groups and sex								
		0-17		18-34		35-64		65+		
		Տղա- մարդ/ Male	Կին/ Female	Տղա- մարդ/ Male	Կին/ Female	Տղա- մարդ/ Male	Կին/ Female	Տղա- մարդ/ Male	Կին/ Female	
Ընդամենը	316	57	38	59	46	53	44	8	11	
<i>այդ թվում՝ ըստ քաղաքացիության երկրի</i>										
Իրանի Իսլամական Հան- րապետություն / Islamic Republic of Iran	22	2	2	8	1	7	2	-	-	
Իրաք / Iraq	75	16	11	16	13	10	7	2	-	
Սիրիա / Syria	104	14	11	18	14	19	16	5	7	
Ուկրաինա / Ukraine	93	23	14	11	15	13	14	1	2	
Այլ երկիր/ Other country	17	2	-	5	3	3	2	-	2	
Քաղաքացիություն չունեցող/ Stateless	5	-	-	1	-	1	3	-	-	

Աղյուսակ 7.9 Փախստական ճանաչված կամ այլևս փախստական չհամարվող անձանց¹ բաշխումն ըստ սեռի, տարիքային խմբերի և քաղաքացիության երկրի, 2015թ.

Table 7.9 Distribution of Persons Recognized as Refugee or no Longer Recognized as Refugee Disaggregated by Sex, Age Group and Country of Citizenship, 2015

Քաղաքացիության երկիրը Country of Citizenship	Ընդա- մենը Total	այդ թվում՝ ըստ տարիքային խմբերի և սեռի / of which by age groups and sex									
		0-13		14-17		18-34		35-64		65+	
		Տղա- մարդ/ Male	Կին/ Female	Տղա- մարդ/ Male	Կին/ Female	Տղա- մարդ/ Male	Կին/ Female	Տղա- մարդ/ Male	Կին/ Female	Տղա- մարդ/ Male	Կին/ Female
Շնորհվել է փախստականի կարգավիճակ Granted refugee status	202	30	22	8	1	35	33	26	29	8	10
<i>այդ թվում՝ ըստ քաղաքացիության երկրի of which by country of citizenship</i>											
Իրաք /Iraq	41	4	7	4	-	9	10	2	4	1	-
Սիրիա/ Syria	85	10	4	3	1	14	13	17	11	5	7
Ուկրաինա/Ukraine	68	15	10	1	-	10	9	6	12	2	3
Այլ երկիր/ Other country	8	1	1	-	-	2	1	1	2	-	-
Դադարեցվել է փախստա- կանի կարգավիճակը Refugee status ceased	59	4	1	3	-	20	6	17	6	1	1

¹Միգրացիոն պետական ծառայության կամ դատական մարմինների կողմից կայացված վերջնական որոշումների հիման վրա/ Based on the final decisions of State Migration Service or Judicial authorities.

Աղյուսակ 7.10 ՀՀ սահմանային գրանցումներն ըստ սահմանահատման ընթացքում անձի կողմից ներկայացրած փաստաթղթերի

Table 7.10 Distribution of RA Boarder Rregistrations by the Country of Submitted Documents

Քաղաքացիությունը	2015թ.		2014թ.		Country of the Documents
	Մուտք	Ելք	Մուտք	Ելք	
Ընդամենը	2 709 284	2 752 711	2 734 596	2 776 268	Total
այ թվում՝					Of which
Հայաստան	1 562 580	1 610 252	1 585 316	1 632 390	Republic of Armenia
Ռուսաստան	445 078	445 355	468 511	468 711	Russian Federation
Վրաստան	310 948	308 949	343 384	342 016	Georgia
Իրան	144 551	143 837	116 227	115 339	Islamic Republic of Iran
ԱՄՆ	33 719	34 025	24 595	24 567	United States
Ուկրաինա	27 636	27 764	26 883	26 195	Ukraine
Ֆրանսիա	19 164	19 230	19 662	19 826	France
Գերմանիա	15 911	15 940	15 403	15 444	Germany
Թուրքիա	9 436	9 366	10 157	10 152	Turkey
Լեհաստան	9 310	9 340	10 964	10 998	Poland
Իտալիա	7 401	7 406	9 365	9 389	Italy
Միացյալ Թագավորություն	7 103	7 086	6 123	6 134	United Kingdom
Նիդերլանդներ	7 024	7 016	6 756	6 721	Netherlands
Իրաք	6 378	6 376	1 334	1 102	Iraq
Բելառուս	6 071	6 050	4 894	4 908	Belarus
Իսրայել	5 778	5 837	4 783	4 778	Israel
Ղազախստան	5 487	5 562	5 059	4 950	Kazakhstan
Լիբանան	5 454	5 171	4 340	4 030	Lebanon
Բելգիա	4 599	4 595	4 273	4 263	Belgium
Սիրիա	4 340	3 099	4 736	2 997	Syrian Arab Republic
Հնդկաստան	3 951	3 899	4 314	4 132	India
Կանադա	3 932	3 922	3 358	3 372	Canada
Հունաստան	3 625	3 590	3 501	3 497	Greece
Իսպանիա	3 610	3 594	4 132	4 098	Spain
Շվեդիա	3 195	3 236	2 669	2 688	Sweden
Ավստրիա	3 053	3 058	3 640	3 621	Austria
Մոլդովա	2 994	2 388	1 483	1 502	Republic of Moldova
Արաբական Միացյալ Էմիրություններ	2 988	3 022	1 351	1 276	United Arab Emirates
Շվեյցարիա	2 878	2 904	2 626	2 651	Switzerland
Ճապոնիա	2 596	2 630	2 095	2 103	Japan
Չեխիա	2 372	2 350	2 417	2 416	Check Republic
Չինաստան	2 273	2 209	1 606	1 582	China
Բուլղարիա	2 185	2 196	2 543	2 551	Bulgaria
Ավստրալիա	2 162	2 168	1 680	1 660	Australia
Ուզբեկստան	1 860	1 788	1 798	1 752	Uzbekistan
Դանիա	1 784	1 781	1 356	1 342	Denmark
Թուրքմենստան	1 608	1 597	1 665	1 635	Turkmenistan
Լատվիա	1 378	1 380	1 275	1 292	Latvia
Լիտվա	1 356	1 352	1 373	1 348	Lithuania
Արգենտինա	1 293	1302	767	770	Argentina
Նորվեգիա	1 249	1 243	876	881	Norway